ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» սեպտեմբերի 2011թ. **N --- - Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» N 258-Ա որոշման 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 29,718.0 հազար դրամ, որից՝

1) 8,260.0 հազար դրամ՝ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին՝ «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ս. Շահումյանի հուշարձանի պատվանդանի և նրան հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների համաֆինանսավորման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին» հոդվածով,

2) 19,460.0 հազար դրամ՝ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակին՝ «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքների համաֆինանսավորման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին» հոդվածով,

3) 1,998.0 հազար դրամ՝ Բագրևանդի փողոցին հարող տարածքում գտնվող դամբարանադաշտում հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ իրականացնելու համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Մասնագիտական ծառայություններ» հոդվածով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» N 258-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի (այսուհետ՝ ՄԱԶԾ) «Գեղեցիկ Երևան» ծրագրին, համաձայն որի նախատեսվում է 2011 և 2012 թվականների ընթացքում Երևան քաղաքում իրականացնել վատ վիճակում գտնվող հուշարձանների նորոգման, դրանց հարակից տարածքների բարեկարգման, արտաքին լուսավորության անցկացման, ինչպես նաև շենքերի անբարեկարգ ճակատների վերանորոգման աշխատանքներ: «Գեղեցիկ Երևան» ծրագրի բյուջեն 2011-2012 թվականների համար կազմում է 184,800.0 հազար դրամ՝ հավասար բաշխելով Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ–ի միջև, որից Երևանի քաղաքապետարանի 2011 թվականի համաֆինանսավորման բաժինը կազմում է 27,720.0 հազար դրամ: Համաձայն ծրագրի՝ աշխատանքները ձեռքբերելու նպատակով նախատեսվում է նշված գումարը տրամադրել ՄԱԶԾ–ին: «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել Ս. Շահումյանի հուշարձանի պատվանդանի և նրա հարակից տարածքի բարեկարգման՝ 16,500.0 հազար դրամ արժողությամբ և շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքներ՝ 38,900.0 հազար դրամ արժողությամբ, որից Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորման բաժինը համապատասխանաբար կազմում է 8,260.0 հազար դրամ և 19,460.0 հազար դրամ, ինչն էլ հաշվի առնելով՝ սույն որոշման նախագծով առաջարկվում է ընդհանուր 27,720.0 հազար դրամ տրամադրել ՄԱԶԾ–ին: Միաժամանակ, 2012 թվականին իրականացվելիք աշխատանքների համար անհրաժեշտ գումարները կնախատեսվեն Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեով:

Երևան քաղաքի Բագրևանդի փողոցին հարող տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող հողամասերը օտարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել տարածքում առկա դամբարանադաշտում հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ իրականացնել, որից հետո հնարավոր կլինի հողամասերի օտարման համար կազմակերպել հրապարակային աճուրդներ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հնագիտական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ 1,998.0 հազար դրամ նախահաշվային գումարը նախատեսվում է հատկացնել սույն որոշման նախագծով, որի շրջանակներում ձեռք կբերվեն պեղումներ իրականացնելու մասնագիտական ծառայությունները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 29,718.0 հազար դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ